ԱԴԱՆԱՅԻ 1909 Թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ Տ. Ս.

1908 թ. երիտթուրքերի հեղափոխության հետևանքով Թուրքիայում վերականգնվեց 1876 թ. սահմանադրությունը[1], և երկրում առժամանակ հաստատվեց մամուլի ազատություն: Սահմանադրության ընդունումը և երիտթուրքական կառավարողների շռայլ խոստումներն ընդհանրական հայրենիքի, Թուրքիայի բոլոր ազգերի ազատության ու իրավահավասարության մասին լավատեսություն էին ներշնչում հայ հասարակությանը, այդ թվում և հայ լրագրողներին: Սակայն այս բարենպաստ ժամանակաշրջանը շուտով ավարտվեց, և երիտթուրքերը, մոռանալով հեղափոխության ընթացքում իրենց սատարած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին տված խոստումները, սկսեցին սահմանափակել խոսքի ազատությունը: Սահմանադրության նկատմամբ հայ ժողովրդի ունեցած հավատը խախտվեց 1909 թ. ապրիլին Ադանայի վիլայեթում կազմակերպված կոտորածներով, որոնց հետևանքով զոհվեցին մոտ 30000 անմեղ հայեր, 300 կալվածք այրվեց, հափշտակվեց ավելի քան 10000 գլուխ անասուն, իսկ նյութական վնասները հասան 20 միլիոն թուրքական լիրայի (մոտ 500 միլիոն ֆրանկի)[2]: Ադանայի ջարդերը շրջադարձային նշանակություն ունեցան պոլսահայ և առհասարակ արևմտահայ մամուլի համար, որն ազատվեց երիտթուրքական կառավարության և կուսակցության՝ երկիրը քաղաքակրթելու և եվրոպականացնելու երևութական ու կեղծ ձգտումների նկատմամբ ունեցած պատրանքներից:

1909 թ. ապրիլին Ադանայում կազմակերպված հայության կոտորածներին հաջորդող առաջին ամիսներին արևմտահայ մամուլի հրապարակումները ցույց են տալիս, որ ջարդերը հայերի համար անսպասելի էին (թեև հայ ժողովրդի նկատմամբ բռնություններն ու ջարդերը սահմանադրության հաստատումից հետո էլ մշտապես շարունակվում էին): Թեպետ մամուլի հրապարակումներն աչքի էին ընկնում առավել տեղեկատվական, քան վերլուծական բնույթով, սակայն տպագրվեցին նաև շատ արժեքավոր

---

[1] 1876 թ. «Նոր օսմանները» գահընկեց արեցին սուլթան Աբդուլ Ազիզին և նոր գահակալ Աբդուլ Համիդ II-ին հարկադրեցին ընդունել իրենց պարագլուխներից մեկի՝ Միդհատ փաշայի կազմած առաջին սահմանադրությունը, սակայն Աբդուլ Համիդ II-ը 1878 թ. վերացրեց սահմանադրական վարչակարգը և ստեղծեց միահեծան բռնակալական իշխանություն: Հեղափոխության մասին մանրամասն տե՛ս **Шпилькова В.,** ***Младотурецкая революция 1908-1909 гг., М., 1977,*** Մանդելշտամ Ա., Երիտասարդ թյուրքերի պետությունը, Էջմիածին, 1916, **Feroz Ahmad,** *The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914, London, 1969,* **Buxton R. C.,** *Turkey in Revolution, London-Leipzig, 1909.*

[2] **Brézol G.,** *Les Turcs ont passé là… Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et etablissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Paris,1911, p. 12.*

նյութեր (հայ և օտարերկրյա ականատեսների վկայություններ, դիվանագիտական փաստաթղթեր, արտասահմանյան մամուլում լույս տեսած հոդվածներ և այլն), որոնք հայ հասարակությանը ներկայացրին Ադանայի 1909 թ. կոտորածների ողջ ընթացքն իր աղետալի հետևանքներով՝ այն եզրակացությամբ, որ ջարդերի իրական կազմակերպիչներն են եղել երիտթուրքերը: Դարասկզբին՝ մինչև Աբդուլ Համիդի բռնապետության ավարտը, Կ. Պոլսում և Զմյուռնիայում լույս էին տեսնում շուրջ երկու տասնյակ պարբերականներ, իսկ 1908 թ. մինչև Մեծ եղեռնը՝ ավելի քան 120 թերթեր և ամսագրեր: 1908-1914 թթ. արևմտահայ մամուլի զարգացման առանձին փուլ են: Այս շրջանում Կ. Պոլսում շարունակում էին հրատարակվել հրապարակախոսական ու հասարակական արժեքով առանձնացող «Բյուզանդիոն» (1886-1918, տնօրեն՝ Բ. Քեչյան) և «Մանզումե-ի էֆքյար» («Մտածությունների շարք», 1866-1919, հրատարակվում էր հայերեն, տնօրեն՝ Հ. Գայսերյան) օրաթերթերը: Իր հասարակական ու մշակութային կարևոր նշանակությունն էր պահում «Արևելյան մամուլ» (հրատարակվել է մինչև 1909 թ.) շաբաթաթերթը: Հեղափոխությունից հետո սկսեցին լույս տեսնել. Կ. Պոլսում՝ «Ժամանակ» (1908-1914), «Կոհակ» (1909-1914), Զմյուռնիայում՝ «Դաշինք» (1909-1919) և «Աշխատանք» (1910-1914) թերթերը և այլն: Այս շրջանում միայն Կ. Պոլսում հրատարակվում էին տասից ավելի երգիծական պարբերականներ: Նկատելի էր նաև Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում հրատարակվող պարբերականների թվաքանակի շեշտակի աճ[3]:

1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո պարբերական մամուլի համար սկսվեց գործունեության բարենպաստ մի ժամանակաշրջան, որը մեծ ոգևորություն առաջացրեց արևմտահայ մտավորականության շրջանում: «Ինչ ծանր անարգանք էր մարդկային հանճարուն այն ատելի և անմիտ գրաքննության ներկայությունը մամլույն քով: Այդ խավարի պաշտոնյայք խույս տվին լույսեն, կը հուսանք, որ ալ չվերադառնան»,- գրում է արևմտահայ գրող-հրապարակախոս Թեոդիկը (Թեոդորոս Լաբճինճյան) 1909 թ. «Ամենուն տարեցույցում»[4]: 1908 թ. հետո կտրուկ աճեց արևմտահայ պարբերականների քանակը, և մամուլին հնարավորություն ընձեռվեց արծարծել հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կարևոր խնդիրներ: «Ժամանակ» օրաթերթի առաջին համարում լույս տեսած «Կասկածոտները» հոդվածում գրող-հրապարակախոս Զապել Եսայանը 1908 թ. հուլիսի 11(24)-ը պատմական դարձած թվական է համարում, որից հետո արևմտահայ մամուլը, որը մինչ այդ լռում էր, բարձրաձայնեց համերաշխության, եղբայրության, անհրաժեշտ պայքարի և քաղաքացիական պարտավորությունների մասին: Զ. Եսայանը, խոսելով հեղափոխության շնորհած ազատության մասին, ափսոսանք է հայտնում, որ կան հոռետեսներ, որոնք կասկածներ են սերմանում հայության մեջ: Հեղինակը վստահեցնում է, որ հին օրերը այլևս չեն վերադառնա, և հոռետեսությունը դիտում է որպես տխուր երևույթ նոր

[3] Տե՛ս **Խառատյան Ա.,** Արևմտահայ մամուլը XX դարի սկզբին, Ժուռնալիստիկա (Տեսության և պատմության հարցեր), պր. Ա, Ե., 1999, էջ 79-80:

[4] **Ադանալյան Մ.,** Թեոդիկի «Ամենուն տարեցույցը» 1907-1929, Ե., 1981, էջ 27:

կյանքի մեջ[5]: Այս շրջանում արևմտահայ մամուլի էջերում հաճախ էին հնչում կարծիքներ, որ հենց մամուլը պետք է ցույց տար հայ ժողովրդի վերքերը բուժելու միջոցները և այն ուղին, որին պետք է հետևեր ժողովուրդը: Նշվում էր, որ մամուլը պետք է լույս սփռեր խավարում գտնվողների վրա, մինչդեռ ընթերցող հասարակությունը դատապարտված էր կարդալու անձնական պոռթկումների արդյունք դարձած հրապարակումներ[6]: Ըստ արևմտահայ լրագրող Ենովք Արմենի, պոլսահայ և ոչ մի թերթ, բացառությամբ «Բյուզանդիոնի», չկարողացավ հեռատեսորեն և անկաշկանդ վերլուծել քաղաքական դեպքերը. «Լրագրությունը, ինչպես բռնապետության շրջանին, նույնպես ազատ մամուլի շրջանին ալ, չկրցավ հանդիսանալ ղեկավար ույժ մը՝ որ տեր ըլլար մտավորական հոսանքին, զայն վարեր գիտակցորեն և ուղղեր իր արժանի դերին»[7]:

Քանի որ Կոնստանդնուպոլիսն ու Զմյուռնիան արևմտահայ հասարակական մտքի կենտրոններն էին, որտեղ հրատարակվում էր արևմտահայ պարբերականների գերակշռող մասը (1908-1914 թթ. ավելի քան 120 թերթ ու ամսագիր), ապա հենց նշված քաղաքների հայկական մամուլը պետք է հասարակության ուշադրությունը սևեռեր գավառում սկսված բռնությունների խնդրի վրա: Երիտթուրքերի հեղաշրջումից անմիջապես հետո արևմտահայ թերթերում բավական տեղ էր հատկացվում բռնատիրության տարիների վերապրումներին, տպագրվում էին մեծ քանակությամբ հուշեր: Նկատելի է նաև ազգի թերությունների մեջ խորամուխ լինելու ձգտումը, մինչդեռ երկրորդական նշանակություն էր տրվում երկրում օրավուր ահագնացող տնտեսական ու քաղաքական բռնություններին (գավառի դրության վատթարացում, օսմանյան խորհրդարանի ընտրություններում փոքրամասնությունների ընտրական իրավունքների կազմակերպված ոտնահարում և այլն): Նման կողմնորոշման էր հետևում «Ֆրու-Ֆրու» շաբաթաթերթը, որում բազմաթիվ են համիդյան ռեժիմը քննադատող հոդվածները, իսկ թերթի տնօրեն Վահան Փափազյանը, անդրադառնալով մամուլում արծարծվող՝ հայերի նկատմամբ բռնությունների, վիլայեթներում ոչ հայ կուսակալներ նշանակելու և այլ խնդիրների նկատմամբ հայ ընթերցողի ունեցած հետաքրքրությանը, գրում է. «...ձեր իտեալն է աշխարհը մութ տեսնել, հուսահատական գտնել իրաց վախճանը և կոկորդիլոսի կեղծ արցունքներ թափել ձեր այնքան սիրած հայրենակիցներու թշվառության վրա»[8]:

Սակայն Ադանայի 1909 թ. ջարդերը արևմտահայ մամուլը դուրս բերեցին այս թմբիրից. մամուլի ուշադրության կենտրոնում հայտնվեց գավառում սկսված բռնությունների խնդիրը: «Արևելյան մամուլի» հոդվածագիր Լևոն Մկրտիչյանը ցավով է նշում, որ հայ ժողովուրդը չարաչար սխալվել ու խաբվել է՝ մի պահ հուսալով, թե թուրք սահմանադրական կառավարությունը արմատապես պիտի հեղաշրջեր երկիրը. այն նույն հին, կործանարար քաղաքականության շարունակողն էր, որի անմիջա-

[5] Տե՛ս Ժամանակ, Կ. Պոլիս, 15-18.X.1908:
[6] Տե՛ս Փյունիկ, Կ. Պոլիս, 1909, N 4, էջ 1:
[7] **Ենովք Արմէն,** Թրքահայ գրականությունը մամուլի ազատության թվականին,Կ. Պոլիս, 1909, էջ 12:
[8] Ֆրու-ֆրու, Կ. Պոլիս, 1909, N 5, էջ 1:

կան հետևանքներից մեկը եղավ Ադանայի ջարդը[9]: «Կոհակ» շաբաթաթերթը 1909 թ. մայիսի 30-ին հրապարակած հոդվածում հաղորդում է, որ «Սահմանադրության հռչակումեն ի վեր մեր թշվառացած հայրենիքը ոչ միայն իր որդիներու ստեղծագործ ու շինարար աշխատանքի պտուղները վայելելու բաղդը չունեցավ, այլ սարսափի, կոտորածի կյանք մըն ալ անցուց և այժմ չգիտե, թե ի՞նչ պիտի գա իր գլխին: ...Կիլիկիայի կոտորածները և նման դեպքերը զորավոր պատճառներ են, որոնք առաջացնում են անվստահության ու թշնամության զգացումներ»[10]: Իսկ «Կառափնատ» քաղաքական-երգիծական շաբաթաթերթի «Զարդաբեր հողմունք» խորագիրը կրող հոդվածում ասվում է. «Որու՞ն մտքեն կանցներ թե մեկ իյնող Համիտի փոխարեն բյուրավոր Համիտներ պիտի բուսնեին. որո՞ւն մտքեն կանցներ թե Սահմանադրության վերահաստատումը ավելի փորձանավոր պիտի դառնար քան Բռնակալության շարունակումը»[11]:

Հաճնի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Դանիելյանը ևս գրում էր, որ սահմանադրության հռչակումով հայ ժողովուրդը միամտաբար հավատաց, որ Օսմանյան կայսրությունում պետք է իշխեն ազատությունը, արդարությունն ու հավասարությունը, սակայն «… որքան սուղի նստավ վրադ. ազատության նեկտարին հետ խմցուցին քեզի արյունի, արցունքի ամենասոսկալի վերջին բաժակն ալ. (ո՛ւր էր թե վերջինն եղած ըլլար ան)»[12]: Փաստորեն, ոչ միայն խաբված լինելու հանգամանքն էր ընդգծվում, այլ՝ կոտորածների շարունակվելը:

Հայ հասարակությունը սկզբնական շրջանում հավատաց երիտթուրքերի անհիմն հավաստիացումներին, որ Կիլիկիայի կոտորածները կազմակերպել են համիդյան ռեժիմի հետևորդները: «Բյուզանդիոնում» տպված լրատվությունը տեղեկացնում է, որ Զմյուռնիայի զինվորական հրամանատարն այցելել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Եղիշե եպիսկոպոս Դուրյանին և, խոսելով Ադանայի վերջին կոտորածի մասին, հաստատել, որ այն կազմակերպել են բռնապետության կողմնակիցները[13]: Սկզբնական շրջանում «Ժամանակը» ևս հավատում էր, որ Ադանայի ջարդը «հին իրադարձությունների հետևանք է», և վստահեցնում էր ժողովրդին, որ հայության նկատմամբ որևէ մասնավոր թշնամանք չկա, քանի որ հայ ժողովրդի ճակատագիրը կապված է երկրի ընդհանուր ճակատագրի հետ[14]: Իսկ «Արևելյան մամուլը» արդեն ապրիլի 28-ին գրում է. «Այդ ամեն ահռելի և սարսափելի դեպքերն ու իրողությունները մեծ մարդասպանին վերագրվեցան և մեզի կ'մնար համոզվիլ ու ընդունիլ այս վերագրումը, իբրև ամենե մեղմացուցիչը և նպատակահարմարը՝ մխիթարության ամենափոքր եզր մը գտնելու համար»[15]: Հատկանշական է, որ այս հրապարակման մեջ ընդգծվում էր նաև այն, որ հայերը չէին ցանկանում հավատալ երիտթուրքերի մեղսակցությանը: Երիտթուրքերի նկատմամբ հայե-

[9] Արևելյան մամուլ, Զմյուռնիա, 1909, N 23, էջ 530:
[10] Կոհակ, Կ. Պոլիս, 30.V.1909:
[11] Կառափնատ, Կ. Պոլիս, 1910, N 9, էջ 132:
[12] **Ներսես եպիսկոպոս Դանիելյան,** Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Կ. Պոլիս, 1912, էջ 17:
[13] Բյուզանդիոն, Կ.Պոլիս, 23.IV-6.V.1909:
[14] Ժամանակ, 4-17.IV.1909:
[15] Արևելյան մամուլ, 1909, N 18, էջ 509-510:

րի վստահության մասին է խոսվում նաև «Նյու Յորք թայմսի» 1909 թ. ապրիլի 23-ի հաղորդագրության մեջ. «Հայերը, ընդունելով, որ կոտորածները կազմակերպել և իրագործել են համիդյան ռեժիմի հետևորդները, հետագա պաշտպանություն են սպասում երիտթուրքերից»[16]: Ադանայի հայոց առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերովբյանը ևս 1909 թ. գրած «Ատանայի ջարդը և պատասխանատուները» գրքում պնդում էր, որ կոտորածի պատասխանատուներն են համիդյան ուժերը, տգետ իսլամականները, կուսակալ Զևադ բեյը, Մուստաֆա Ռեմզին և իթթիհատի մի քանի թերթեր ու ղեկավարներ, իսկ հայերի միակ հանցանքը չափազանց վստահությունն էր, թե սահմանադրության շնորհիվ ջարդերն ու կողոպուտն այլևս անկարելի են[17]:

Ջարդերը համիդյան ռեժիմի հետևորդների կողմից կազմակերպվելը հավանական էր թվում այն պատճառով, որ հին պաշտոնյաներից շատերը երիտթուրքական հեղաշրջումից հետո էլ, հատկապես գավառներում, պահպանում էին իրենց դիրքն ու հեղինակությունը: Սակայն կարճ ժամանակ անց՝ մայիս-հունիս ամիսներին, պոլսահայ մամուլին հայտնի դարձավ ջարդերին երիտթուրքական իշխանությունների ոչ միայն մասնակցությունը, այլև կազմակերպչական դերը: Կառավարությունը պատասխանատուներին պատժելու փոխարեն ոչ միայն կոտորածների ողջ մեղքը բարդեց հայերի վրա, այլև արգելեց անգամ սպանվածների անունները հաղորդել իրենց հարազատներին՝ թույլատրելով հիշատակել միայն ողջ մնացածներին: Տարօրինակ չէ, որ հայ կոտորելը չէր արգելվում, սակայն սպանվածների անունները տեղեկացնելն արգելվում էր[18]: Մայիսի 13-ին «Ժամանակում» լույս տեսավ ջարդերի ականատես Լևոն Փափազյանի հոդվածը, որում հեղինակը կոտորածների կազմակերպման ընթացքում անուրանալի էր համարում «Իթիտալ» («Չափավորություն») լրագրի խմբագրապետ Իհսան Ֆիքրիի դերը, որը, Ադանայում ջարդեր հրահրելու գործում իթթիհատին օգնող ամենամեծ ուժը լինելով, տպագրում էր հայերին զրպարտող սուտ լուրեր[19]: Նման հրապարակումները նպատակ ունեին մահմեդականներին գրգռել հայերի դեմ. «Շերիաթապաշտներուն դրդիչներու բուն նպատակները թեև քաղաքական էին, բայց անոնք կրոնական մոլեռանդությունը գրգռելով միայն կրնային իրենց այդ նպատակներուն հասնիլ»[20]:

Մուշեղ արքեպիսկոպոսը ևս նշում էր, որ Թուրքիայում ցանկացած ժամանակ ջարդեր իրականացնելու ոչ մի դժվարություն չկար, քանի որ իսլամի կրոնական համոզմունքները և թուրքերի՝ կողոպուտի բնազդը խթան էին պաշտոնյաների ձեռքին և Մարսելի «Լեար» թերթի մի հրապարակումից մեջբերում է հետևյալը. «Թուրքը ամեն զբաղումներե ավելի կը նախընտրե ռազմիկի արհեստը... Թուրքիո մեջ ջարդերը կը ներկայա-

---

[16] **Kloian D.,** *The Armenian Genocide. News Accounts From the American Press 1915-1922, USA, 2004, ներդիր, p. 17.*

[17] Տե՛ս **Մուշեղ եպիսկոպոս Սերովբյան,** Ատանայի ջարդը և պատասխանատուները (նախընթաց պարագաներ), Գահիրե, 1909, էջ 8:

[18] **Աշճյան Հ.,** Ատանայի եղեռնը և Գոնիայե հուշեր, Նյու Յորք, 1950, էջ 22:

[19] Ժամանակ, 13-26.V.1909:

[20] Սասուն, Կ. Պոլիս, 1909, N 3, էջ 1-2:

նան ո՛չ իբր դիպվածական աղետքներ, այլ մանավանդ իբր տնտեսական երևույթներ»[21]:

Արևմտահայ մամուլում օր օրի գերակշռում էին հռչակված սահմանադրության նկատմամբ քննադատական և անվստահ վերաբերմունք ունեցող նյութերը: Իսկ ավելի ուշ «Բութանիա» պարբերականում հոդվածագիր Ա. Պազպազյանը, խոսելով սահմանադրության հռչակումից հետո խոստացված համերաշխության և այդ ուղղությամբ ոչ մի քայլ չարած երիտթուրքերի մասին, համոզված է, որ «որևիցե գաղափար մը կարելի է իրականացնել հոն՝ ուր զանիկա ըմբռնելու, մարսելու կարողությունն ու տրամադրությունը կա: ...այլապես, ի՞նչով բացատրել այն բոլոր սարսափներն ու ատելությունները՝ որ սահմանադրության առաջին օրերուն իսկ անցավ հայաբնակ գավառներու, քաղաքներու վրայեն… Ինչպե՞ս մեկնել, ու ինչո՞վ արդարացնել վերջապես Ատանայական Մեծ Եղեռնը, որ ամենեն խոշոր վերքը բացավ Հայության կողին վրա…»[22]: Այս կոտորածները հասարակության կողմից չէին ընկալվում որպես առանձին դեպքեր, այլ անընդհատ շարունակվող քաղաքականության մի մաս: Արևմտահայ մամուլի էջերում այս ջարդերը համիդյան կոտորածների հետ համեմատելիս էլ ավելի սարսափելի էին ներկայացվում և նույնիսկ բնորոշվում որպես Մեծ եղեռն, երբեմն ակնարկվում էր նաև սպասվող ավելի մեծ արհավիրքի մասին: Պարբերականներում տեղ գտան նաև ջարդերի գեղարվեստական նկարագիրը կրող հրապարակումեր: «Տխուր խոհեր Ատանայի կորուստին առթիվ» հոդվածում, հեղինակը, նկարագրելով «արյունոտ հայրենիքն ու տխրատեսիլ իրականությունը», նշում է, որ հայությունը ստիպված է «ապրիլ առանց ապագայի, ապրիլ առանց ժպիտի, ապրիլ ցավոտ ու փշոտ սրտով, միշտ ձեռքը կուրծքին... միշտ սուրը գըլ-խուն...»[23]:

Կիլիկիայի կոտորածներից հետո երիտթուրքական իշխանությունները սաստկացրին արևմտահայ մամուլի նկատմամբ հետապնդումները: «Ձայն հայրենյաց» շաբաթաթերթը հաղորդում է, որ «Մանզումեի էֆքյարում» տպված «Ընդհանուր ջարդ» հոդվածի համար Ա. Քյուրքճյանը և թեր- թի արտոնատերը ենթարկվել են հետապնդումների, և նրանց գործերը հանձնվել են Պատերազմական ատյանին, իսկ «Բյուզանդիոն» օրաթերթի հրատարակումը դադարեցվել է (տուգանքների ենթարկվեց, առժամանակ դադարեցվեց նաև «Մանզումե-ի էֆքյարը»)[24]: Արևմտահայ մամուլի նկատմամբ վերսկսված հետապնդումների առիթով Թեոդիկը գրում է. «Տպագրական տեսչության մոլեգնոտ հարկերի տակ վերստին իր կեղա-կարծ ներկայությունն էր դրել» գրաքննությունը, որի նպատակն էր «սանձել մասնավորապես իրերապարսավ պայքարը» և հատկապես «իրենց կապանքները թոթափած... տարիների բռնակալության դեմ քինահույզ հարձակումներ» գործող լրագրողներին[25]:

---

[21] **Մուշեղ արքեպիսկոպոս,** Հայկական մղձավանջը, Բոստոն, 1916, էջ 53:
[22] Բութանիա, Ատաբազար, 1910, N 7, էջ 1-2:
[23] **Անդրանիկ,** Սեբաստիա, 16.V. 1909:
[24] Տե՛ս Ձայն հայրենյաց, Կ. Պոլիս, 10-23.IV.1909:
[25] **Թեոդիկ,** Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1916-1920 թ., էջ 270:

Ջարդերի հենց սկզբից Կ. Պոլսի ու Զմյուռնիայի մամուլի էջերում տպագրվեցին աղետալի դեպքերը մանրամասն նկարագրող ականատեսների վկայություններ: Արշակունի Թեոդիկը, որը Ազգանվեր հայուհյաց ընկերության կողմից աղետյալներին օգնելու համար մեկնել էր Կիլիկիա, գրում է, որ շատ հայերի տներում նույնիսկ արգելված էր թերթերում հրապարակված ականատեսների սարսափելի պատմությունները կարդալ, քանի որ «անոնցմով խորապես ազդվողներ էին եղած, զգայնիկ անձեր՝ սոսկումե ցնցում, ցնցումե տագնապ ծածանուտ՝ հիվանդ ինկած էին»[26]: Ապրիլի 2-ին Ադանայից փախստական մի հույն պատմում է. «…Հայոց թաղը կրակի մէջ էր. տուն մը այրեցին, որուն մէջ 250 հոգի լեցված էին, նաև ուրիշ շատ մը տուներ, և դեռ կրակի մեջ էր… ճամբուն վրա 500 տուննոց Հայ գյուղ մը այրացավեր ըրած էին. Մարդ չէր մնացած… Ջարդն սկսավ երեկ իրիկուն ժամ 3-ին, և դեռ լրացած չէր այս առավոտ: Զորքերն օգնեցին ամեն կերպով. Իրենց հրացաններով թե՛ մարդ զարկին և թե՛ խանութներու դուռները կոտրելով օգնեցին, և իրենք ալ լցվեցան ավարով: Էշրաֆն և ուլեման[27] կրնային առաջքն առնել, բայց թուրքերը կ'ըսեին թե վերեն հրաման կար որ չմիջամտեն: …Աստված ողորմի այս բազմաչարչար Ազգին»[28]: Ջարդերի ականատես Հակոբ Թերզյանը գրում է, որ Կ. Պոլսի մի օրաթերթի ցանկացել է հեռագիր ուղարկել «սարափելի ջարդ, թալան, հրդեհ, սոսկալի թշվառություն, պաշարման վիճակ» բովանդակությամբ, սակայն հեռագրատան պաշտոնյաները չէին ընդունել՝ ասելով, որ կուսակալը արգելել է ջարդի մասին հեռագիր ուղարկել, և իրենց տրված հրամանի համաձայն՝ խմբագրում էին նման հեռագրերը «ողջ առողջ ենք» խոսքերով[29]:

Կոտորածների ընթացքում և հետո Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ մամուլում հրապարակվեցին նաև օտար ականատեսների վկայություններ և այդ օրերին արտասահմանյան մամուլում լույս տեսած նյութեր: «Ատանայի ջարդերն ամերիկացի միսիոնարներուն համեմատ» վերնագրի ներքո «Բյուզանդիոնը» տպագրեց հեռագրերի շարք: Ադանայում ամերիկացի միսիոներների ղեկավար Ուիլյամ Չեմբերսը մայիսի 1-ին Մերսինից Լոնդոն ուղղարկած հեռագրի մեջ գրում է. «... Ջարդը կատաղաբար վերսկսավ կիրակի օրը: Ապրիլ 12(25)-ին, զորքերն ու պաշըպոզուգները սարսափելի հրացանաձգություն մը սկսան Հայոց վարժարանի վրա, ուր իբր երկու հազար անձինք ապաստանել էին: Իսկույն հրդեհեցավ շենքը, և շենքեն փախչող ապաստանյալները դուրս երևալուն պես հրացանի բռնվեցան: Շատերն ալ կորան բոցերու մեջ: Ավերիչ հրդեհն անխափան շարունակեցավ մինչև Գշ. առավոտ, հրո ճարակ ըլլալով չորս եկեղեցիք և անոնց դպրոցները, և հարյուրավոր տուներ...»[30]: Բյուզանդ Քեչյանը հրապարակեց Տարսոնի ամերիկյան քոլեջի նախագահ Թոմաս Քրիստիի վկայությունները, որը ջարդերի առաջին օրը Ադանայում էր եղել և,

---

[26] **Թեոդիկ Ա.,** Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1910, էջ 24:

[27] Թուրք երևելիներ և հոգևոր դասի ներկայացուցիչներ *(eşraf, ulema)*:

[28] Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 8.IV - 21.V.1909: Տե՛ս նաև Ձայն հայրենյաց, 10 -23.IV.1909:

[29] **Թերզյան Հ.,** Կիլիկիո աղետը, Կ. Պոլիս, 1912, էջ 58:

[30] Բյուզանդիոն, 25.IV-8.V.1909:

անձամբ շրջելով կոտորածների վայրերում, դրանց վերաբերյալ կազմել էր բազմաթիվ վիճակագրեր, ցուցակներ ու տեղեկագրեր: Թ. Քրիստին դատապարտում է Ադանայի կուսակալ Ջևադ բեյին՝ հայերին ջարդե- լու պատրաստությունները չխափանելու, կատարվածին որևէ արգելք չդնելու, այլ ընդհակառակը, գրգռիչ հեռագրերով շրջակա բնակավայրերի մահմեդականներին ևս հայերի դեմ տրամադրելու համար[31]: Անգլիայի հյուպատոսարանի առաջին թարգմանիչ Պ. Ֆիցմորիսը, լինելով հայասեր և մարդասեր անձ, խորապես ազդված Ադանայի նահանգի արյունահեղ դեպքերից, ջարդերի առաջին օրերին հայտարարում է. «Ատանայի խռովությունները արդեն նախապես պատրաստված ծրագրի մը հետևանքներն էին և անոնք բնավ որևէ կապ չունին ռեաքսիոնեռական այն շարժումին որ պայթեցավ անցեալ շաբաթու մեջ»[32]:

Այս ամիսներին արևմտահայ թերթերում սկսեցին տպագրվել ջարդերի ընթացքը նկարագրող դիվանագիտական փաստաթղթեր: «Արևելյան մամուլի» 1909 թ. ապրիլի 28-ի համարում Մերսինում և Իսկենդերունում (Ալեքսանդրեթ) հավատարմագրված օտարահպատակ փոխհյուպատոսները[33] հրապարակեցին կիլիկյան կոտորածների վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ պարունակող երկու նամակ. «Պատմությունը այս դեպքերը պիտի արձանագրե ամենասև գույներով... Ջարդ, թալան, հրդեհ և բռնաբարում առանց խղճահարության: Մարդկությունը կ՚ահաբեկի այս տեսարաններեն: Ատանայի շրջակաները (Հաճըն, Տեորթ Եոլ ևն) ինչպես նաև Թարսուս, զոհերով լեցված է, մարդիկ, կանայք և երեխաներ և ասոնց մեռելական լռությունը ցույց կուտա աղետին մեծությունը»,- գրում է Մերսինի փոխհյուպատոսը (13/26.IV.1909) և վերջում ավելացնում, որ ցանկալի է՝ քաղաքակիրթ Եվրոպան հաշվի առնի XX դ. դարում տեղի ունեցած այս անօրինակ դեպքերը և ըստ այդմ գործի[34]: Երկրորդ նամակում (12/25.IV.1909) Ալեքսանդրեթի փոխհյուպատոսը ներկայացնում է Ադանայի նահանգի ջարդերի ազդեցությունը շրջակա բնակավայրերում և տեղեկացնում, որ Դյորթ-Յոլի 5000 հայ բնակիչ ունեցող գյուղերը պաշարված են ոտից գլուխ զինված 15000 քուրդ լեռնականներով և մի քանի հարյուր չերքեզներով, Բայասի բանտի բանտարկյալները ազատ են արձակվել և ջարդում, թալանում ու հրդեհում են տեղի գյուղերն ու ագարակները, նաև տեղեկացնում է, որ թուրքական մի նավ, 550 հոգանոց կանոնավոր զորքով, ուղղվել է դեպի Դյորթ-Յոլ (Չոք Մարզվան) անդորրությունը վերահաստատելու համար և հույս է հայտնում, որ նրանք չեն միանա ջարդարարներին հայ ազգը մեկընդմիշտ ոչնչացնելու համար[35]:

Ջարդի բուն կազմակերպիչների՝ նոր իշխանությունների իրական պատկերը պետք է ի հայտ գար նաև այն բանից հետո, երբ նրանք, ճիշտ համիդյան ոգով, կոտորածների ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի

[31] Նույն տեղում, 14-27.VII.1909:
[32] Արևելք, Կ. Պոլիս, 9.IV.1909:
[33] Ցավոք, մեզ չի հաջողվել պարզել նրանց անունները և որ երկրների ներկայացուցիչներ լինելը:
[34] Արևելյան մամուլ, 1909, N 18, էջ 519-521:
[35] Նույն տեղում, էջ 521-522:

վրա՝ նրանց մեղադրելով զինված կոմիտե ստեղծելու, առանձին «թագավորության» երազանքներ փայփայելու և օսմանյան Թուրքիան անդամահատելու դավաճանական ձգտումների մեջ: Ադանայի Պատերազմական ատյանի՝ Բ. Դռանն ուղղված տեղեկագրում հայերը մեղադրվում էին որպես անկախության կողմնակիցներ: Ադանան, ըստ այդ տեղեկագրի, հայերն ընտրել էին որպես խռովության համար առավել հարմար վայր և ի սկզբանե այստեղ միջոցներ էին ձեռք առել և նախապատրաստվել[36]: Միջոցների շարքում նշվում էր կայսրության տարբեր շրջաններից մեծ թվով հայ մշակների Ադանա գալը, որը գարնան և ամռան ամիսներին սովորական երևույթ էր: «Ատանայի մեջ կամփոփվեր ամենաստվար հայությունը իր տնտեսական ու հողագործական բարգավաճ կյանքով», ուստի այս անգամ գլխավոր հարվածը հասցվեց Ադանայի ուղղությամբ, «քանի որ Ատանային տրվելիք հարվածը Կիլիկիո սրտին տրված մահացու հարվածը պիտի ըլլար»[37]: Հունիսի 6-ին վերը նշված տեղեկագրի բոլոր կետերին հակադարձող փաստարկներ է բերում իր վերլուծական հոդվածում Բյուզանդ Քեչյանը[38]:

«Բյուզանդիոն» օրաթերթում տպված «Կիլիկյան արհավիրքը» հոդվածում Սուրեն Պարթևյանը ևս, ներկայացնելով կիլիկիահայության կոտորածների ընդհանուր պատկերը, անդրադառնում է իշխանությունների բռնած դիրքին. «Ասոնք կ'արդարացնեն կատարված ու շարունակվող սոսկավիթխար հրեշությունը: …և կ'համարձակին արյունի մեջ լողացող կիլիկեցին ամբաստանել իբրև ապստամբ ու անջատական ձգտումներու գործիքն ու արտահայտիչը: …Մինչև ե՞րբ մեր արյունն ու արցունքը պիտի հոսի «Հայկական թագավորության» մը ցնորական, զառանցական վարկածին անունով…»[39]: 1909 թ. մայիս-հունիս ամիսներին «Արևելյան մամուլի» էջերում բազմաթիվ էին երիտթուրքական կառավարությանը քննադատող հոդվածները՝ այն եզրակացությամբ, որ, ջարդերի բուն պատասխանատվությունը խոստովանելու փոխարեն, իշխանություններն ընտրել էին մեղքը հայերի վրա բարդելու քաղաքականություն[40]: Կոտորածներից անմիջապես հետո, որպես կոտորածների մեղավորներ, Մերսինում և Ադանայում բազմաթիվ հայեր բանտարկվեցին: «Մանզումեի էֆքյար» օրաթերթը մայիսի 4-ի համարում տեղեկացրեց, որ Ադանայում արդեն 300-ից ավելի հայեր բանտարկված են, իսկ «Մերսինի մեջ բանտարկյալ ունինք Մոստեղյանը, որուն հանցանքն է տունեն Լևոն թագավորին սուրին պատկերը և մի քանի հայկական պատկերներ ելլելը, Էվերեկցի երիտասարդ մը, որուն քովեն նմանապես պատկերներ և գիրքեր ելած են…»[41]: Նման անհիմն մեղադրանքներից հետո «Արևելյան մամուլը», «Բյուզանդիոնը»,«Ժամանակը», «Մանզումեի էֆքյարը», «Ձայն հայրենյացը» և այլ թերթեր հրապարակեցին կոտորածների կազմակեր-

[36] Տե՛ս Բյուզանդիոն, 3-16. VII. 1909:
[37] **Մուշեղ եպիսկոպոս Մերովբյան,** նշվ. աշխ., էջ 11:
[38] Բյուզանդիոն, 6-19. VII. 1909:
[39] Նույն տեղում, 27. IV-10. V. 1909: Տե՛ս նաև **Պարթևյան Ս.,** Կիլիկյան արհավիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 39:
[40] Տե՛ս Արևելյան մամուլ, 1909, N 24, էջ 553:
[41] Մանզումե-ի էֆքյար, 4.V. 1909:

պիչներին՝ երիտթուրքերին, մերկացնող նյութեր: Ուշագրավ են նշված թերթերի այն նյութերը, որոնք վերաբերում են Հասանբեկ գյուղի, Դյորթ-Յոլի, Հաճնի ինքնապաշտպանական հերոսական կռիվներին՝ այն եզրակացությամբ, որ փրկվել են այն բնակավայրերը, որոնք դիմադրություն են ցույց տվել խուժանին և զորքին: «Ժամանակի» մայիսի 12-ի հրապարակումներից մեկում ասվում է, որ թեև Դյորթ-Յոլի երեք գյուղերի 15000 հայեր, երկար ժամանակ պաշարված լինելով 30000 թուրքերի կողմից,ի վերջո կարողացել են փրկվել, միևնույն է հայերի ապագան մութ է, քանի որ տեղի իշխանությունները «հայակերներ» են[42]: Կարելի է եզրակացնել, որ չնայած ինքնապաշտպանությունն ընկալվում էր որպես կոտորածը կանխելու միակ ուղի, այնուամենայնիվ, հայ ժողովրդի հետագա ճակատագիրն անորոշ էր թվում: Կիլիկիահայության փրկության համար մամուլում շրջանառվում էին գաղթելու, դավանափոխ լինելու և օտար միջամտությունից օգնություն ակնկալելու միջոցները[43]:

1910 թ. հրատարակված՝ Ա. Թեոդիկի «Ամիս մը ի Կիլիկիա» պատմա-հրապարակախոսական երկը նմանատիպ այլ հրատարակությունների հետ կարևոր դեր խաղաց՝ հայ հասարակությանը օգնելով ժամանակին ըմբռնելու կատարված իրադարձությունների իրական պատճառները, վերջնականապես ձերբազատվելու երիտթուրքական սահմանադրության նկատմամբ եղած սին հույսերից: Հեղինակը կարևորեց 1909 թ. հայկական հերոսամարտերի փորձը՝ որպես հայ ժողովրդի՝ զանգվածային բնաջնջումից փրկվելու միակ ճիշտ ուղի[44]:

Մուշեղ եպիսկոպոսը «Հայկական մղձավանջը» գրքում իրավացիորեն փաստում է. «Իթթիհատ արյունի ճամբուն վրա իր հանդիսավոր մուտքը ըրած էր Ատանայով: Դժվարությունը կը կայանար սկզբնավորության և առաջին պատասխանատվութենեն հաջող խուսափումին մեջ: Երկուքին մեջ ալ հաջողած էր»[45]: Ադանայի եղեռնի մասին Օսմանյան երեսփոխանական ժողովի համար իր պատրաստած տեղեկագրում Հակոբ Պապիկյանը ցավով եզրակացնում է, որ Միություն և առաջադիմություն կուսակցության անդամները մասնակցել են Ադանայի եղեռնագործության կազմակերպմանն ու իրագործմանը և նշում, որ այս իրողությունը հաստատված է նահանգի տարբեր հյուպատոսների, ամերիկացի միսիոներների և այլ անձանց կողմից, իսկ արտասահմանյան մամուլի արձագանքների շնորհիվ հասարակական կարծիքը ևս գրեթե համոզված է, որ ջարդերը իրագործել են երիտթուրքերը[46]:

Կոտորածներից ամիսներ անց, իրադրությունը Կիլիկիայում շարունակում էր լարված մնալ, և օդում կախված էր ջարդի սպառնալիքը: «Մանզումե-ի էֆքյար»ի հրապարակումներից մեկում ընդգծվում էր այս կոտորածների կրկնության հավանականությունը և հաղորդվում, որ վախի մթնոլորտն արդեն առկա է Կարինում,

---

[42] Ժամանակ, Կ. Պոլիս, 12-25 մայիսի, N 174, 1909, էջ 2:

[43] Տե՛ս Կոհակ, 30.V.1909:

[44] Տե՛ս **Թեոդիկ Ա.,** նշվ. աշխ., էջ 178:

[45] **Մուշեղ արքեպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 41:

[46] **Պապիկյան Հ.,** Ատանայի եղեռնը, Տեղեկագիր Հակոբ Պապիկյանի օսմանյան երեսփոխան Էտիրնեի, Կ. Պոլիս, 1919, էջ 42:

Մուշում և Տիգրանակերտում: Հաշվի առնելով այն, որ վտանգը դեռ չի անցել՝ աչալրջությունն ու ամուր ինքնապաշտպանությունը դիտվում էր որպես նոր կոտորածները կանխելու միակ հուսալի միջոց[47]:

Ադանայի 1909 թ. ջարդերին հաջորդող այս մի քանի ամիսներին արևմտահայ մամուլի հրապարակումների մեծ մասը հասարակությանը բերեցին այն իրական համոզմանը, որ ջարդերը կազմակերպված և հրահրված են եղել երիտթուրքական կուսակցական ու կառավարական կենտրոններից, և դրանց անմիջականորեն մասնակցել է թուրքական կանոնավոր զորքը: Հաճախ, թեև քողարկված, մատնանշվում էր կոտորածների շարունակելի լինելը կամ հայերի զգոնության բացակայության դեպքում նոր, ավելի կործանարար ջարդերի հավանականությունը: Նշված ժամանակահատվածում մամուլը հակադարձեց հատկապես երիտթուրքական կառավարության՝ հայերին որպես կոտորածների մեղավորներ ներկայացնելու անհիմն փորձերին: Հարկ է նշել, որ Ադանայի կոտորածներից հետո արևմտահայ մամուլի էջերում հրատարակվում էին Օսմանյան կայսրության բոլոր ն ուղղված՝ համերաշխության կոչեր պարունակող հոդվածներ, որոնք, թերևս, նպատակ ունեին նպաստել թուրքերի և քրիստոնյա ազգային փոքրամասնությունների խաղաղ գոյակցությանը: Ընդ որում, այդ հրապարակումներում ընդգծվում էր ոչ միայն համերաշխության ստեղծման ուղղությամբ երիտթուրքական իշխանությունների անգործությունը, այլև վերջիններիս կողմից նոր ջարդեր հրահրելու քաղաքականությունը:

Այսպիսով, Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի հայ մամուլի՝ կիլիկիահայության կոտորածները լուսաբանող հրապարակումները, թեև մեծ մասամբ կրում էին լրատվական բնույթ, այնուամենայնիվ, կարողացան լույս սփռել 1909 թ. Ադանայի կոտորածների իրական պատճառների վրա, իսկ որոշ դեպքերում՝ մատնանշել նաև ջարդերի իրական կազմակերպիչներին՝ երիտթուրքական իշխանություններին:

ПЕРВЫЕ ОТКЛИКИ НА АДАНСКУЮ РЕЗНЮ 1909 Г. В ЗАПАДНОАРМЯНСКОЙ ПЕРИОДИКЕ

КАЛТАХЧЯН Т. С.

Резюме

Аданская резня 1909 года нашла отражение на страницах западно-армянской периодики, где были опубликованы свидетельства армян и иностранцев, ставших очевидцами этой трагедии, а также дипломатические документы и статьи, изданные в зарубежной прессе. Материалы западноармянской периодики свидетельствовали о том, что резня в Адане была организована и осуществлена младотурками с помощью регулярной турецкой армии. В результате младотурки ужесточили цензуру в отношении западноармянских периодических изданий.

[47] Մանզումե-ի էֆքյար, 4.IV.1909: